



ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՅԱՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐՎԱՆ ՍԸ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ



եր հավետ սիրեցյալ Հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանի ազատագրության 27-րդ տարեդարձը անդամ մըն ալ ամեն հայու մտքին մեջ կղրոշմե երկու պատմական անժխտելի իրականություն:

Առաջինը՝ մեր ժողովրդի դարավոր դեռությունն ու անպատմելի տառապանքն է, զոր արյունով ու արցունքով ապրեցանք եվրոպական շահամուղ դիվանագիտության հովանավորության տակ և հասանք ազգովին ոչնչանալու զարհուրելի վտանգին առջև:

Երկրորդը՝ մեր փրկության և վերածնունդի հրաշալի առավտան է, որ եկավ մեզի նախախնամական երկնառաք տնօրինության մը նման և հայուն դարավոր խավարը լուսավորեց, վերջակետ մը դրավ անոր և նորագարդ Հայաստանի առջև բացալ ազատության, արդարության, մտավար և բարոյական հառաջդիմության, մեր ազգային մշակույթն ու քաղաքակրթությունը վերանորոգելու հույակապ դարաշրջան մը:

Քսան և յոթը կարճ տարիներու ընթացքին Խորհրդային Հայաստանի հայրենանվեր կառավարության և քաջարի ժողովուրդին արձանագրած հառաջդիմությունն ու հերոսական աշխատանքները արդարեւ կ'մնան բոլորովին բացառիկ հաղթանակներ ո՛չ միայն մեր փոքրիկ ազգի պատմական տարեգրությանց, այլ նաև անտարակույս շատ ավելի հարուստ և նպաստավոր պայմաններու մեջ ապրող պետությունց կյանքին մեջ:

Տեսե՛ք մեր դպրոցներուն, մեր դրականության, մեր արվեստներուն, մեր բազմապիսի շինարարությանց, մեր տնտեսական և ազգային վերելքի զմայլելի կենսունակությունն ու հառաջխաղացքը հոն. տեսե՛ք արտասամանի հայության արթնությունն ու խանդավառությունը, Հայրենադարձի սրտազին բաղձանքներն ու գործնական շարժումը, հայուն հորենական տան շինությունը. տեսե՛ք գաղթական կյանքի տաժանքներն ազատագրվելով՝ հայության մեծ զանգվածին խառնրվելու եռանդը... Այս հույժ քաջալերական և սրտապնդիչ երևույթները, և պարզապես՝ մահվնե դեպի կյանք վերադառնալու իրողությունը արդյունք է այն մեծ թվակառնին, զոր այսօր ազգովին կտոնենք ցնծությամբ:

Ահա՛ Հայաստանյայց Առաքելական Սրեկեղեցին իր արժանընտիր Հովվապետով, Խորհրդային Հայաստանի սրտին մեջ, Սրեջմիածնա սրբատաշ կամարներուն տակ նըվիրված է մեր ժողովրդի հոգեկան և բարոյական վերածնունդին և ամբողջ աշխարհի շորս ծագերուն ցրված հայության հոգեկան բնագավառը կ'մնա:

Հարգելով և տոնելով պատմական այս մեծ թվականը, իրականապես ըմբռնած կըլլանք անոր ճշմարիտ նշանակությունը և մասնակցած մեր նվիրական Հայրենիքի և մեր բազմատաղանդ ժողովրդի վերելքին և անոնց նորանոր հաղթանակներուն:

(«Լուսրե» 29 նոյեմբեր 1947 թ.)